Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3352

491.99-8
F-27

2010

~~XIII. f2. N 23~~

2002

491.99-8
F-27

# ԲԱՆՍԱԼԻ

## ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԲԱՆՍԱԼՈՒ

ԿԱՄ



ԴԻՒՐԻՆ ԴԱՍԵՐ ՆՈՐ ԿԱՐԴԱԼ [illegible]
ՀԱՄԱՐ։

ՆՈՐ ԵՕՐՔ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՏԵՏՐԱԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1875

(3099)

218
2б023 Ա.Հ.



Անիկայ հովուի պէս իր հօտը պիտի հովուէ.
Գառնուկները իր բազուկներովը պիտի ժողվէ,
Ու զանոնք իր [illegible] մէջ պիտի [illegible]է,
Եւ ծիծ տուողները կամաց պիտի վարէ։

Եսա. Խ. 11։

5389
ZUUՌ-Арм.ССР Гос. Библиотека им. А. Мясникяна

ա բ գ դ ե զ

է ը թ ժ ի լ

խ ծ կ հ ձ ղ

ճ մ յ ն շ ո

չ պ ջ ռ ս վ

տ ր ց ւ փ ք

և օ ֆ

*ա բ գ · դ ե զ · է ը թ · ժ ի լ ·*

*խ ծ կ · հ ձ ղ · ճ մ յ · ն շ ո ·*

*չ պ ջ · ռ ս վ · տ ր ց · ւ փ ք ·*

*և օ ֆ ·*

---

*ա խ չ բ ծ պ գ կ ջ դ հ ռ*

*ե ձ ս զ ղ վ է ճ տ ը մ ր*

*թ յ ց ժ ն ւ ի շ փ լ ո ք*

*և օ ֆ*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна



Գիր սորվելու վարժութիւններ ։

| | | | |
|---|---|---|---|
| է | բ | դ | ա |
| էբ | բէ | դա | ադ |
| բէ | էբ | ադ | դա |
| մ | ի | ո | թ |
| մի | իմ | ոթ | թո |
| իմ | մի | թո | ոթ |
| ս | ե | լ | օ |
| սե | ես | լօ | օլ |
| ես | սե | օլ | լօ |

| | | | |
|---|---|---|---|
| կ | ը | շ | ն |
| կը | ըկ | շն | նշ |
| ըկ | կը | նշ | շն |
| | | | |
| տ | ա | ր | ի |
| տա | ատ | րի | իր |
| ատ | տա | իր | րի |
| | | | |
| դ | ե | խ | ա |
| դե | եդ | խա | ախ |
| եդ | դե | ախ | խա |
| | | | |
| ծ | ա | պ | ի |
| ծա | ած | պի | իպ |
| ած | ծա | իպ | պի |
| | | | |
| հ | ո | ղ | ա |
| հո | ոհ | ղա | աղ |
| ոհ | հո | աղ | ղա |

| | | | |
|---|---|---|---|
| փ | ե | չ | է |
| փե | եփ | չէ | էչ |
| եփ | փե | էչ | չէ |
| | | | |
| ո | հ | ի | ձ |
| ոհ | հո | իձ | ձի |
| հո | ոհ | ձի | իձ |
| | | | |
| ծ | օ | ւ | ո |
| ծօ | օծ | ւո | ու. |
| օծ | ծօ | ու | ւո |
| | | | |
| զ | ե | ի | ժ |
| զե | եզ | իժ | ժի |
| եզ | զե | ժի | իժ |
| | | | |
| վ | ո | ֆ | օ |
| վո | ով | ֆօ | օֆ |
| ով | վո | օֆ | ֆօ |

| | | | |
|---|---|---|---|
| ա | ռ | ք | ի |
| առ | ռա | քի | իք |
| ռա | առ | իք | քի |

---

Երկտառեր վանկեր ։

Դաս 1 ։

| | | | |
|---|---|---|---|
| ալ | ահ | ան | աս |
| ախ | աղ | աջ | ատ |
| ակ | այ | առ | ափ |

Դաս 2 ։

| | | | |
|---|---|---|---|
| ախ | ալ | աղ | ահ |
| ան | ատ | ակ | աջ |
| այ | առ | աս | ախ |

Դաս 3 ։

| | | | |
|---|---|---|---|
| դա | եմ | եղ | ետ |
| դի | եզ | են | եւ |
| դե | եկ | եռ | եփ |

Դաս 4 ։

| | | | |
|---|---|---|---|
| եռ | են | եկ | դի |
| եղ | դա | եփ | եմ |
| եւ | դե | ետ | եղ |

Դաս 5 ։

| | | | |
|---|---|---|---|
| զա | էշ | թը | թէ |
| զի | էջ | թո | թի |
| էզ | էր | թե | ժէ |

Դաս 6 ։

| | | | |
|---|---|---|---|
| թո | ժէ | էզ | էր |
| էջ | էշ | թի | թը |
| զի | թէ | զա | թե |

Դաս 7 ։

| | | | |
|---|---|---|---|
| իժ | իք | ծա | ձե |
| իմ | լի | հա | ձի |
| իր | խէ | ձա | ճէ |

Դաս 8։

| | | | |
|---|---|---|---|
| լի | իմ | խէ | իք |
| հա | ձի | իժ | ձա |
| ճէ | ծա | ձև | իր |

Դաս 9։

| | | | |
|---|---|---|---|
| ճի | նէ | շա | ոխ |
| մի | չէ | չա | ոհ |
| յի | պէ | ռա | ով |

Դաս 10։

| | | | |
|---|---|---|---|
| ոհ | պէ | մի | յի |
| չէ | ճի | ոխ | շա |
| ռա | չա | նէ | ով |

Դաս 11։

| | | | |
|---|---|---|---|
| ոճ | կը | ջէ | օդ |
| ոչ | մը | սէ | օձ |
| որ | չը | րէ | օր |

Դաս 12 :

մը ոչ չը կը
սէ րէ որ ջէ
օղ օր օձ ոճ

---

Կարդալու վարժութիւններ :

ո՞վ է եզ մը
ես եմ է ան
ան չէ դև է

ա՛ռ աս ել եկ
աղ է ոչ ատ
և եզ ան է

աս ալ առ օձ է ատ
ան չէ՞ աս չէ՛ · ձի է
դև է ան էշ չէ՞ աս

| | |
|---|---|
| հա՛ օձ է | եղ չէ՞ աս |
| եզ մըն է | ո՛չ. եղ չէ |
| աղ չէ՞ աս | իժ է ան |

---

Ամէն աշակերտ թող գոց ընէ աս դասերը և ետքը վարժապետը թող գոց հեգել տայ ։

Միավանկ եռագիր բառեր ։

Դաս 1 ։

| | | | |
|---|---|---|---|
| արդ | արտ | այլ | ազդ |
| անկ | աչք | այբ | ամպ |
| արջ | այծ | ախտ | այր |

Դաս 2 ։

| | | | |
|---|---|---|---|
| բակ | բահ | բեռ | բէճ |
| բան | բաց | բեր | բիծ |
| բառ | բաւ | բեմ | բոց |

Դաս 3 ։

| | | | |
|---|---|---|---|
| գաղ | գեղ | գէշ | գիր |
| գամ | գետ | գէր | գոդ |
| գառ | գէտ | գիծ | գոլ |

Դաս 4։

| | | | |
|---|---|---|---|
| դոհ | դահ | դաս | դէղ |
| դող | դատ | դեղ | դէտ |
| դոմ | դար | դեռ | դէմ |

Դաս 5։

| | | | |
|---|---|---|---|
| դիր | երբ | զատ | թագ |
| դող | երգ | զոհ | թաթ |
| դու | երթ | զով | թակ |

Դաս 6։

| | | | |
|---|---|---|---|
| թաղ | թել | թիզ | թող |
| թան | թեմ | թիլ | թոռ |
| թաց | թեփ | թիւ | թոք |

Դաս 7։

| | | | |
|---|---|---|---|
| ժամ | ի՛նչ | լակ | լիճ |
| ժիր | իսկ | լար | լիր |
| ի՛նք | իւղ | լաւ | լիք |

Դաս 8։

| | | | |
|---|---|---|---|
| լոկ | խաբ | խամ | խիճ |
| լող | խակ | խաչ | խիտ |
| լու | խաղ | խաւ | խող |

Դաս 9։

| | | | |
|---|---|---|---|
| խոչ | խոփ | ծախ | ծափ |
| խոտ | ծագ | ծակ | ծեծ |
| խոց | ծալ | ծառ | ծեր |

Դաս 10։

| | | | |
|---|---|---|---|
| ծեփ | ծոմ | կաթ | կահ |
| ծէս | ծով | կալ | կաղ |
| ծիծ | ծոց | կախ | կամ |

Դաս 11։

| | | | |
|---|---|---|---|
| կապ | կեր | կին | կոթ |
| կար | կէս | կիր | կոծ |
| կաւ | կէտ | կից | կոկ |

Կարդալու վարժութիւններ ։

| | |
|---|---|
| ամպ չէ՞ մի | այծ չէ՞ ան |
| արջ է ան | ամպ գոլ է |
| արտ է աս | ազգ ի՞նչ է |
| | |
| բեռ է ան | գէր այծ է |
| բաց աչք է | գէշ բակ է |
| բահ մը բե՛ր | գէր գառ է |
| | |
| ան գոհ է | լաւ գամ է |
| գէշ դաս է | գէշ գեղ է |
| գէշ չէ ան | ի՞նչ գիր է |
| | |
| դեղ չէ՞ մի | ո՞ր գիծ է |
| աս բեր դիր | գող չէ՞ ան |
| ի՞նչ դեղ է | հա՛ գող է |



Կարդալու վարժութիւններ ։

ո՞ր տեղ է
ե՞րբ գամ ես
լաւ երգ է

դեղ մը բե՛ր
ժիր լար է
աս լու չէ՞

թա՛ն ու եղ
լա՞ւ բան է
չէ՛ ․ գէշ է

զով օդ է
ո՞ր թագ է
թա՛ն է ատ

հա՛ լեռ մը
գետ է ա՛ն
թոռ մը բե՛ր

թող ինք գայ
ես ալ գա՞մ
խաղ է աս

| | |
|---|---|
| խակ է ատ | ծակ չէ՞ ան |
| խող մը առ՛ | չէ · այր է |
| խոտ ալ բե՛ր | ծառ ալ կայ |

Շարունակութիւն գոց հեգելու դասերուն, որ վարժապետը գոց հեգել տալու է աշակերտին։

Դաս 12։

| | | | |
|---|---|---|---|
| կոծ | կոպ | հաղ | հատ |
| կող | կով | համ | հաց |
| կաձ | կոր | հայ | հաւ |

Դաս 13։

| | | | |
|---|---|---|---|
| հեզ | հոգ | հով | ձագ |
| հետ | հող | հոտ | ձախ |
| հին | հոն | հոր | ձէթ |

Դաս 14։

| | | | |
|---|---|---|---|
| ճաշ | ճիգ | մահ | նաւ |
| ճառ | ճիռ | մաս | չար |
| ճար | ճիտ | մատ | քար |



5389-56. (3099)
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

Միավանկ քառագիր բառեր ։

Դաս 1 ։

| | | | |
|---|---|---|---|
| բամբ | բանտ | բարձ | բերք |
| բախտ | բարդ | բարք | բիրտ |
| բայց | բարկ | բերդ | բիւր |

Դաս 2 ։

| | | | |
|---|---|---|---|
| բողկ | բութ | գաղտ | գանձ |
| բոյն | բուռ | գայլ | գիրկ |
| բոյս | բուք | գանկ | գիրք |

Դաս 3 ։

| | | | |
|---|---|---|---|
| գիւղ | գորգ | գուբ | դաղձ |
| գիւտ | գործ | գութ | դաշտ |
| գոյն | գորտ | գուռ | դարձ |

Դաս 4 ։

| | | | |
|---|---|---|---|
| դէմք | զանց | զեղջ | զոյգ |
| դէպք | զարդ | զերծ | զուտ |
| դուռ | զարմ | զիստ | զուր |

Դաս 5։

թամբ թոյլ թութ թուփ
թանկ թոյն թուշ թուք
թերթ թուզ թուր թուղ

Դաս 6։

ժայռ լայն լիրբ խելք
ժանկ լերկ լոյս խեղճ
ժում լինտ լուռ խիղճ

Դաս 7։

խիստ խորշ խուց ծայր
խոնջ խուլ խուփ ծուխ
խորթ խուղ խօսք ծուծ

Դաս 8։

կաղմ կարգ կեղծ կիրք
կամք կարթ կեղտ կողմ
կայծ կարճ կերպ կոյս

Դաս 9։

| | | | |
|---|---|---|---|
| կոյր | կուժ | հալք | հարթ |
| կոնք | կուլ | հայր | հարկ |
| կոշտ | կուտ | հաստ | հարս |

Դաս 10։

| | | | |
|---|---|---|---|
| հեշտ | հիւղ | հում | ձայն |
| հերկ | հիւս | հուն | ձեռք |
| հինգ | հիւր | հուր | ձիրք |

Դաս 11։

| | | | |
|---|---|---|---|
| ձիւթ | ճեղք | մայր | մենք |
| ձիւն | ճիշտ | մաշկ | մեղք |
| ձուկ | ճիւղ | մարդ | մերկ |

---

Կարդալու վարժութիւններ։

Ժիր կապ է ատ
չէ՛ ․ Թոյլ է ան
քիչ մը կաւ բե՛ր

*հոն կին մը կար*
*կէս հաց կու տաս*
*լաւ կով է ատ*

*հին տուն է աս*
*հոն քար մը կար*
*հատ մը հոս բե՛ր*

*շուտ բարձ մը բե՛ր*
*բայց հոս չի կայ*
*ատ գէշ բոյս է*

*խեղճ մարդ է ան*
*կին մըն ալ կայ*
*թո՛ղ շուտ գան տուն*

*պէտք չէ որ գաս*
*ինք թոյլ մարդ է*
*ու ծոյլ ալ է*

շատ գայլ կայ հոն
ես շատ կուշտ եմ՝
ալ հաց պէտք չէ

հին հիմ մըն է
ո՞ր գանձ է ատ
հոն շատ գործ կայ

---

Կարդալու վարժութիւններ ։

ի՞նչ գիրք է ատ
խիստ շատ պարզ է
մէկ թերթ մը բե՛ր

հոն շատ լոյս կայ
մութ տեղ մըն է
հոս ձայն չի կայ

քիչ մը թութ կե՛ր
չէ՛ ․ կուշտ եմ ես
թուզ ալ թող տայ

խեղճ կի՛ն է ա՛ն
թող շուտ հոս գայ
չոր հաց մը կա՞յ

կեղծ մարդ է ատ
մե՛նք գոհ ե՛նք հոս
բայց գող շատ կայ

քիչ մը ջուր բեր
պաղ ջուր չի կա՞յ
տե՛ս ձիւն կայ հոս

հարթ դաշտ մը՛ն է։
շատ ծառ կայ հո՛ն
բայց յարդ չի կայ

ծուռ պատ է ատ
և շատ լայն ալ
հեշտ գործ է ատ

### Միաւանկ ձգագիր բառեր

Դաս 1 ։

| | | |
|---|---|---|
| բուրգ | գունտ | թուղթ |
| բուրդ | զուսպ | թումբ |
| գունդ | զուրկ | լեարդ |
| խումբ | խունկ | խուրձ |

Դաս 2 ։

| | | |
|---|---|---|
| ծունկ | սուրբ | շուրջ |
| կեանք | շունչ | պարտք |
| կուռք | մուտք | փունջ |
| քուրմ | նուրբ | տունկ |

Կարդալու վարժութիւններ ։

սուրբ գիրք շատ կայ հոս
խումբ խումբ թող գան
հինգ թերթ թուղթ բեր

*փունջ մը վարդ տուր*
*ի՞նչ տունկ է ատ*
*շատ լաւ դեղձ է*

*գունդ մը զօրք կայ հոն*
*սեւ բուրդ թող տայ*
*հաց՝ միս ու խունկ ա՛ռ*

*հաստ կաթ մըն է*
*բայց նուրբ չէ՞ աս*
*հի՛ն բուրգ մը կայ հող*

---

Գլխագիր սորվելու դաս :

| | | | |
|---|---|---|---|
| ա Ա | բ Բ | գ Գ | դ Դ |
| ե Ե | զ Զ | է Է | ը Ը |
| թ Թ | ժ Ժ | ի Ի | լ Լ |
| խ Խ | ծ Ծ | կ Կ | հ Հ |
| ձ Ձ | ղ Ղ | ճ Ճ | մ Մ |

| | | | |
|---|---|---|---|
| յ Յ | ն Ն | շ Շ | ո Ո |
| չ Չ | պ Պ | ջ Ջ | ռ Ռ |
| ս Ս | վ Վ | տ Տ | ր Ր |
| ց Ց | ւ Ւ | փ Փ | ք Ք |
| | օ Օ | ֆ Ֆ | |

---

Թուեր ։

1ա 2բ 3գ 4դ 5ե 6զ 7է 8ը 9թ

10ժ 11ժա 12ժբ 13ժգ 14ժդ 15ժե

16ժզ 17ժէ 18ժը 19ժթ 20ի 30լ

40խ 50ծ 60կ 70հ 80ձ 90ղ

100ճ 200մ 300յ 400ն 500շ

600ո 700չ 800պ 900ջ 1,000ռ

10,000ժռ 100,000ճռ

1,000,000ռռ

Կէտեր ։

| | | | |
|---|---|---|---|
| Բութ | ՝ | Մականկէտ | ' |
| Ստորակէտ | , | Պարոյկ | ՞ |
| Միջակէտ | . | Երկար | ՜ |
| Վերջակէտ | ։ | Պատիւ | ՟ |
| Շեշտ | | Ընդհամայ | ‿ |

Վարժապետը թող առանց նշանակութիւնը և գործածութեան կերպը սորվեցնէ տղոց և միշտ կարդացած ատեննին յիշեցնէ ։

---

Երկավանկ բառեր ։

Ասոնք ալ առջի դասերուն պէս գոց ընելու են աշակերտները ։

Դաս 1 ։

| | | |
|---|---|---|
| Ա-գի | Ա-ղապ | Ա-ժան |
| Ա-բեթ | Ա-ղատ | Ա-լեք |
| Ա-գահ | Ա-ղոխ | Ա-խոռ |
| Ա-ղամ | Ա-թոռ | Ա-ծուխ |
| Ագ-ռաւ | Աղ-նիւ | Ալ-իւր |

Դաս 2։

| | | |
|---|---|---|
| Ա-կանջ | Ա-ղեղ | Ա-ման |
| Ա-կիշ | Ա-ղի | Ա-ղօթք |
| Ա-կօս | Ա-ղուն | Աղ-ուոր |
| Ա-հա | Աղ-բիւր | Աղ-ջիկ |
| Ա-հեղ | Աղ-ուէս | Աղ-քատ |

Դաս 3։

| | | |
|---|---|---|
| Ա-մառ | Ա-յո՛ | Այ-սօր |
| Ա-մէն | Ա-մուր | Ան-բան |
| Ա-միս | Ա-մօթ | Ան-գամ |
| Ա-մուլ | Այ-գի | Ան-գէտ |
| Ամ-բար | Այ-լազգ | Ան-գութ |

Դաս 4։

| | | |
|---|---|---|
| Ա-ներ | Ան-կիրթ | Ա-նուն |
| Ա-նէծք | Ան-կիւն | Ա-շուն |
| Ա-նիւ | Ան-հոգ | Ա-պուշ |
| Ան-կար | Ան-ձև | Աշ-խարհ |
| Ան-դարձ | Անձ-րև | Ապ-տակ |

Դաս 5 :

| | | |
|---|---|---|
| Ա-ռակ | Ա-ռոյգ | Ա-րև |
| Ա-ռաջ | Ա-ռու | Ա-րագ |
| Ա-ռէջ | Ա-սեղ | Ա-րատ |
| Ա-ռողջ | Աս-տղ | Ար-դար |
| Ար-իւն | Աստ-ուած | Ար-թուն |

Դաս 6 :

| | | |
|---|---|---|
| Առ-իւծ | Ա-րու | Ա-ւագ |
| Ար-ծաթ | Ա-րօտ | Ա-ւազ |
| Ար-մաւ | Ար-քայ | Ա-ւել |
| Ար-ծիւ | Ար-մուկ | Ա-ռու |
| Ար-մատ | Ար-ցունք | Ա-րև |

Դաս 7 :

| | | |
|---|---|---|
| Բա-զում | Բա-րի | Բ-զէզ |
| Բա-ժին | Բա-րակ | Բ-ժիշկ |
| Բա-ղարջ | Բամ-պակ | Բե-րան |
| Բակ-լայ | Բան-ջար | Բլ-թակ |
| Բամ-բիշ | Բար-ձր | Բար-տի |

Դաս 8 ։

Բ-լիթ Բ-րինձ Բ-րուտ
Բ-լուր Բո-լոր Բ-ժիշկ
Բ-ճիճ Բո-րոտ Բ-դեշխ
Բ-նաւ Բռ-նի Բա-ղարջ
Բ-նիկ Բուր-վառ Բուր-վառ

Դաս 9 ։

Գա-րի Գա-ւառ Գի-նի
Գա-գաթ Գա-ւիթ Գի-շեր
Գա-զան Գե-հեն Գդ-թոր
Գա-րուն Գե-տին Գն-դակ
Գա-ւաթ Գե-րի Գշ-կուր

---

Կարդալու վարժութիւններ ։

Սա մար-դը այ-գի մը ու-նի․ բայց ա-գահ մարդ մըն է ։ Այ-սօր ամ-պոտ է․ ան-ձրև պի-

տի գայ: Սուտ խօ-սիլ-ը ա-մօթ չէ՞ մար-դուն: Աստ-ուած մեղ-քը կ'ա-տէ, բայց բա-րին կը սի-րէ: Ա-հա՛ աս ջու-րը ա-ղի է: Գի-նի խ-մել աղէկ բան չէ՛: Թիւ-թիւն խ-մելն ալ օ-գուտ չու-նի:

Ա-գահ մար-դը պա-տիւ չու-նի: Մենք ա-խոռ ու-նինք, հոն ձի՝ էշ և կով կայ: Ա-ժան ա-թոռ մըն է աս. ծա-խու կ'առ-նե՞ս: Ա-յո՛. ին-ծի պէտք է ա-թոռ մը: Ա-դամ ա-զատ մարդ մըն էր, բայց մեղք գոր-ծեց ու ին-կաւ: Ա-զատ մար-դը ին-չո՞ւ մեղ-քի գե-րի պի-տի ըլ-լայ:

Պար-տինք ա-մէն ժամ ա-ղօթք ը-նել: Սուրբ գիր-քը

կե-նաց աղ-բիւր է, ա-մէն մարդ թո՛ղ գայ և ձ-րի խ-մէ։ Կե-նաց հաց ալ է. ե-կէ՛ք ա-ռէ՛ք ու կե-րէ՛ք։ Ա-մէն մարդ թո՛ղ կար-դալ շուտ սոր-վի։ Ան-հոգ տ-ղան շուտ չի սոր-վիր։

Ծո՛յլ ձեռ-քը աղ-քատ կըլ-լայ։ Բ-նաւ պէտք չէ որ մէ-կը ան-կիրթ մ-նայ։ Ան-գամ մը պզ-տիկ աղ-ջիկ մը տե-սայ, որ ծեր կն-կան մը Սուրբ Գիրք կը կար-դար։ Ազ-նիւ գործ մըն է աս. թո՛ղ ա-մէն պզ-տիկ ջա-նայ որ ա-տոր պէս ը-նէ։ Ծո-վուն ջու-րը ա-ղի է։

Ան-գութ մէ-կը ապ-տակ մը զար-կաւ ին-ծի. բայց ես բան

չը-րի ա-նոր : Չար տ-ղայ մը մէ-կու մը քար նե-տեց , ա-նոր գլ-խուն դ-պաւ , և շատ ար-իւն վա-զեց : Աս առ-տու ար-ծիւ մը տե-սայ որ իր բոյ-նը կ'եր-թար : Բար-ձր բ-լուր մը ե-լայ , ուս-կից աղ-ուէս մը տե-սայ :

Այ-լազգ մը մեր շու-նը գող-ցաւ : Ա-ռա-կը ի՞նչ է , գի-տե՞ս : Թէ որ ա-ռաջ եր-թաս պի-տի սոր-վիս : Ի՜նչ աղ-ուոր ա-սեղ մըն է աս . Հո՛գ տար որ չի կոտ-րես : Ա-րագ վա-զէ , որ շուտ հաս-նիս տուն : Յի-սուս մե-ղաց ա-րատ չու-նէր . բայց մենք շատ պիղծ ենք :

Շարունակութիւն հեգելու դասին ։

Դաս 10 ։

| | | |
|---|---|---|
| Գ-տակ | Գօ-տի | Դ-մակ |
| Գ-րիչ | Դ-գալ | Դ-դում |
| Գո-գի | Դա-գաղ | Դ-ժոխք |
| Գո-մէշ | Դա-հիճ | Դպ-րոց |
| Գո-ռոզ | Դա-նակ | Դիւ-րին |

Դաս 11 ։

| | | |
|---|---|---|
| Դ-րախտ | Ե-րէկ | Եր-կիր |
| Ե-ղէգ | Ե-րէց | Եր-կու |
| Ե-րազ | Եր-կաթ | Եր-րորդ |
| Ե-րես | Եր-կայն | Երկ-րորդ |
| Եղ-բայր | Եր-կինք | Զամ-բիւղ |

Դաս 12 ։

| | | |
|---|---|---|
| Զ-գոյշ | Զ-ուարթ | Ը-ռուպ |
| Զա-տիկ | Զր-կանք | Ըն-կեր |
| Զա-ւակ | Զօ-րեղ | Ըն-կոյզ |
| Զան-գակ | Ըն-թացք | Ըն-տիր |
| Զին-ուոր | Ըն-ծայ | Ըլ-լայ |

Դաս 13 :

| | | |
|---|---|---|
| Թ-թու | Թր-թուր | Ի-րաւ |
| Թե-թև | Ժա-ռանգ | Լե-զու |
| Թշ-ուառ | Ժո-ղովք | Լե-ղի |
| Թռ-չուն | Ի-լիկ | Լի-տր |
| Թան-ձր | Իշ-խան | Լապ-տեր |

Դաս 14 :

| | | |
|---|---|---|
| Լ-ման | Լր-տես | Խն-ծոր |
| Լ-ուացք | Խա-ղող | Խն-ձոյք |
| Լ-ալիկ | Խա-նութ | Խո-նարհ |
| Լու-մայ | Խ-լինք | Խո-պան |
| Լու-սին | Խ-րատ | Խո-րան |

Դաս 15 :

| | | |
|---|---|---|
| Խոր-հուրդ | Ծ-ծումբ | Ծ-նունդ |
| Խր-ճիթ | Ծ-նող | Ծ-րար |
| Ծա-ղիկ | Ծա-նր | Կա-թիլ |
| Ծա-ղր | Ծա-նօթ | Կա-կուղ |
| Ծած-կոց | Ծա-րաւ | Կա-ղանդ |

Դաս 16 :

Կա-մար Կա-նոն Կա-պար
Կա-մաւ Կա-նուխ Կա-պիկ
Կա-մուրջ Կա-շառ Կա-պոյտ
Կայ-ծակ Կա-շի Կա-տու
Կան-գուն Կան-թեղ Կա-րաս

Դաս 17 :

Կա-րիճ Կա-րող Կա-քաւ
Կար-ծիք Կա-րօտ Կե-ռաս
Կար-կուտ Կա-ցին Կղ-զի
Կար-միր Կա-ւառ Կ-ծիկ
Կար-պետ Կա-ւիճ Կ-ծու

Դաս 18 :

Կ-նիկ Կո-ղով Կ-ռիւ
Կ-նիք Կո-ճակ Կ-տակ
Կ-շիռ Կո-չունք Կս-կիծ
Կո-գի Կո-րեկ Կս-կուծ
Կո-կորդ Կոչ-նակ Կոր-կոտ



Կարդալու վարժութիւններ :

Գ-րիչ մը տո՛ւր ի՛ն-ծի որ դա-սըս գ-րեմ: Ծ՚ա-խու գօ-տի կա՞յ քո-վդ . աղ-ուոր հատ մը կ՚ու-զեմ ես : Սուր դա-նակ է ատ . զ-գոյշ ե-ղի՛ր որ ձեռ-քըդ չը կտ-րես: Այ-սօր ճա-շը դ-դում և բ-րինձ պի-տի ըլ-լայ : Գ-դալ մը դեղ խը-մէ՛ որ հի-ւանդ չըլ-լաս : Լե-ղի է, չեմ ու-զեր :

Այ-սօր դեր-ձակ մը պի-տի գայ մեր տու-նը , մե-զի հան-դերձ պի-տի կա-րէ : Դպ-րոց

մի-նա՞կ կ՚եր-թաս ։ Ո՛չ . եղ-բայր մը ու-նիմ որ հե-տս կու-գայ ։ Ես գի-շեր ե-րազ մը տե-սայ ։ Նո-րէկ եր-կայն դաս մը ա-ռի ։ Ես երկ-րորդ ան-գամ է որ մայ-րդ քեզ կը կան-չէ . շո՛ւտ գ-նա , չէ նէ պի-տի պատ-ժէ քեզ ։

Ես տա-րի ե՞րբ զա-տիկ պի-տի ըլ-լայ ։ Նո-րէկ զին-ուոր մը տե-սայ որ ձեռ-քը զան-գակ մը ու-նէր . զ-ուարթ դէմ-քով այ-լազգ մը ե-կաւ և ան-կէ ու-զեց առ-նել զան ։ Ըն-կեր մը ու-նիմ ես , որ գալ շա-բաթ ըն-կոյզ պի-տի բե-րէ ին-ծի ։ Մ՚ար-դու զը-կանք մի՛ ը-նէր ։ Մ՚եծ քոյ-րս ին-ծի աղ-ուոր ըն-ծայ մը տ-ուեր է ։

Իշ-խան մը ե-կաւ մեր տու-նը , հայ-րս շատ պա-տիւ տը-ւաւ ա-նոր : Խեղ-ճը պա-կաս տ-ղան շատ թշ-ուառ է : Աս գի-շեր ժո-ղովք մը կայ , կու-զա՞ս որ մէկ-տեղ եր-թանք . բայց շատ մութ է , լապ-տեր մը ա՛ռ հե-տդ : Այ-սօր խն-ճոյք ու-նինք . ե-րէցն ալ պի-տի գայ : Վա-ղը լ-ուացք պի-տի ը-նենք :

Խա-նութ ու-նի՞ս . քո-վդ ի՞նչ կայ : Քաղ-ցր խա-ղող ու խն-ձոր ու-նիմ : Աս-տուած խո-նարհ ու կոտ-րած սիրտ կ՚ու-զէ մեզ-մէ : Ի՞նչ կար-ծիք ու-նիս աս մար-դուն վ-րայ . խոր-հած չեմ : Կա-մուրջ տե-սա՞ծ ես : Ե-րէկ շատ խո-շոր

կար-կուտ ե-կաւ . փայ-լակ ալ
կար . և տեղ մը՛ն ալ կայ-ծակ
զար-կաւ :

Հաստ կար-պետ մը՛ն է ատ ,
բայց գոյ-նը խառն է . կար-միր՝
կա-պոյտ ու կա-նանչ մէկ-տեղ
չեմ սի-րեր : Կ-տոր մը կ-տաւ
ծա-խու ա-ռի : Շ-ատ նօ-սր ու
թե-թև լաթ մը՛ն է , չեմ հաւ-
նիր : Կ-տա-կը ի՞նչ է , գի-տե՞ս :
Հար-ցուր և սոր-վէ՛ : Կոչ-նակ
հի-մա զար-կաւ . շո՛ւտ գ-նա
դպ-րոց : Ու-րիշ կան-թեղ մը՛ն
ալ բե՛ր : Ս-ա-ղը կր-կի՛ն ե-
կո՛ւր :

Շարունակութիւն հեգելու դասին ։

Դաս 19 ։

Կ-տաւ Հա-ճոյ Հա-րաւ
Կ-րակ Հա-մար Հա-րուստ
Կ-րօնք Հան-գիստ Հե-ռու
Կր-կին Հան-գարտ Հի-ւանդ
Կօ-շիկ Հան-դերձ Հո-վիւ

Դաս 20 ։

Ձկ-նորս Մա-ծուն Մե-ղր
Ձ-մեռ Մա-հիճ Մի-այն
Ձ-րի Մա-նուկ Մին-չե
Ճ-րագ Մա-քուր Յա-ջող
Ճա-կատ Մար-մին Յա-ջորդ

Դաս 21 ։

Յար-մար Նա-խանձ Շո-գի
Յի-մար Ն-ման Ո-չինչ
Յա-տակ Ն-շան Ոս-կի
Յօ-ժար Շ-նորհք Որ-դի
Յա-րիլ Շա-պիկ Որ-սորդ

Դաս 22 ։

Ու-ղեղ Ո-մանք Պա-նիր
Ու-նայն Ոս-կոր Պան-դուխտ
Ու-ժով Ձա-միչ Պատ-րաստ
Ու-ռեցք Պա-կաս Պ-տուկ
Ուս-տի Պայ-ծառ Պ-նակ

Դաս 23 ։

Պ-տուղ Վ-ճիռ Տ-կար
Պ-սակ Վ-տանգ Տա-պան
Ս-կիզբ Վ-րայ Տր-տում
Ս-տոյգ Վ-րան Տախ-տակ
Վ-կայ Վախ-ճան Տար-բեր

Դաս 24 ։

Տր-տունջ Փա-փաք Քա-րոզ
Ցա-մաք Փր-կանք Քա-լել
Ցո-րեկ Փր-փուր Քա-նի
Ցո-րեն Քա-ղաք Օ-տար
Փայ-լակ Քաղ-ցր Օրհ-նեալ

Կարդալու վարժութիւններ։

Սուտ կ-րօնք մըն է ան․ մի՛ հաւ-տար։ Կօ-շիկ չու-նիմ ես, ու մեր գիւ-ղը կօշ-կար չը կայ։ Մեծ մօ-րդ հա-ճոյ ըլ-լալ կ'ու-զես նէ՝ ա-նոր կամ-քը ը-րէ՛։ Հան-գիստ ըլ-լալ կ'ու-զես նէ՝ ա-ռաջ գոր-ծդ ը-րէ՛, ու վեր-ջը խաղ-ցիր։ Յար-մար և մա-քուր հան-դերձ չու-նի՞ս որ հագ-նիս։

Հա-րուստ մարդ է, բայց կըծ-ծի է։ Աս խիստ թ-թու մա-ծուն է։ Աս մեղ-րը ի՜նչ քաղ-ցր է։ Ո՛վ որ նա-խանձ ու-նի իր սր-տին մէջ, ու-րախ չի կըր-նար ըլ-լալ։ Մի՛ն-չև ե՞րբ քու սիր-տդ քա-րի պէս ա-մուր պի-տի մ-նայ։ Աս ձ-մեռ օ-դը

շատ խո-նաւ ու պաղ է · ա-նոր հա-մար շատ կը մ-սիմ :

Եր-կու ա-միս ա-ռաջ շատ անձ-րեւ կու-գար : Հի-մա ալ շատ մէգ կ'ըլ-լայ : Մ՝ա-ղդ կու-րէ՛ որ ճակ-տիդ վ-րայ չ'իյ-նայ : Սուրբ Գիր-քը ը-սած է թէ՝ Մար-դուն կեան-քը շո-գի մըն է, որ շուտ կ'անց-նի եւ ան-յայտ կ'ըլ-լայ : Սուրբ Գիր-քը մեր ճամ-բուն լոյս տ-ւող ճը-րագն է : Թէ որ ան չըլ-լայ, մահ-ուան շու-քը մեզ կը պա-տէ :

Ը,տ՝ փտ-տած , ո-չի՛նչ եւ ու-նայն բան մըն է : Ու-ղեղ է ատ դա-տը · Թո՛ղ 'ի գործ դր-ուի : Տր-տունջ մի՛ ը-ներ դուն, բայց գոհ ե-ղի՛ր միշտ : ՝Քա-նի որ

տր-տում ե-րես ու-նիս, յայտ-նի է՝ թէ սիր-տդ հան-գարտ չէ : Աս օ-տար և պան-դուխտ մար-դը տ-կար միտք ու-նի :

Յի-սուս իր ան-ձը մե-զի հա-մար փր-կանք ը-րաւ . և ա-սով իր ան-հուն սէ-րը մե-զի յայտ-նեց : Ար-դար մար-դուն մա-հը օրհ-նեալ կ'ըլ-լայ : Աս-տուած ս-կիզբ ու վախ-ճան չու-նի : Ս-տոյգ գի-տեմ որ մեզ-մէ ո-մանք գ-ժոխք պի-տի եր-թան, քան-զի պատ-րաստ չեն ու փա-փաք ալ չու-նին մեր Փրկ-չին գա-լու :

Ան-ցեալ սուրբ օ-րը՝ ծեր ե-րէց մը ազ-դու-քա-րոզ մը ը-րաւ, որ իմ սր-տիս շատ դը-պաւ . Աս-տուած շ-նորհ-ք տայ

որ միշտ յի-շեմ ու 'ի գործ դը-նեմ զան : Բա-րի ծա-ռը՝ բա-րի պ-տուղ կու-տայ : Ուս-տի թէ որ կ'ու-զենք բա-րի պը-տուղ տալ, հարկ է որ ա-ռաջ մեր սիր-տը փոխ-ուի : Սուրբ Հո-գին մի-այն կը-նայ սիրտ մաք-րել :

---

Նմանաձայն բառեր :

Դաս 1 :

| | |
|---|---|
| Ա-գա-րակ | Ա-խոր-ժակ |
| Ազ-գա-կան | Ազ-գա-պետ |
| Ազ-գա-սէր | Ա-ծե-լի |
| Ա-կա-մայ | Ա-հա-ւոր |
| Ա-ղա-խին | Ա-ղա-ղակ |
| Ա-ղա-չանք | Ա-ղաւ-նի |
| Ա-ղու-հաց | Ա-մու-սին |

Դաս 2 ։

Ամ-սա-կան
Ա-նա-մօթ
Ա-նա-ռակ
Ա-նա-րատ
Ան-դա-դար
Ան-լ-ուայ
Ան-կո-ղին
Այ-լան-դակ
Ա-նա-պատ
Ա-նա-սուն
Ա-նի-րաւ
Անդ-րա-նիկ
Ան-խ-նայ
Ան-հա-ւատ

Դաս 3 ։

Ա-պա-ռաժ
Ա-ռա-ջին
Ա-ռաս-պել
Ա-ռաք-եալ
Ա-րա-րած
Ա-րա-րիչ
Ա-րե-ւելք
Ա-ռան-ձին
Ա-ռաջ-նորդ
Ա-ռա-ւօտ
Ա-տե-լի
Աս-տի-ճան
Ա-րե-գակ
Ա-րե-մուտք

Դաս 4։

Ա-ւա-զակ Ա-ւա-զան
Ա-ւե-լորդ Ա-ւե-րակ
Ա-քա-ղաղ Բա-ժա-նում
Բազ-մա-գոյն Բազ-մու-թիւն
Բամ-բա-սանք Բան-սար-կու
Բա-րե-գործ Բա-րե-խօս
Բա-րե-կամ Բա-րե-պաշտ

Դաս 5։

Բա-րու-թիւն Բա-ւա-կան
Բար-ձր-եալ Բար-կու-թիւն
Բիւ-րա-ւոր Բ-նա-բան
Բ-նա-կան Բ-նա-կիչ
Բ-նու-թիւն Բո-լո-րակ
Բո-վան-դակ Բր-դե-ղէն
Գա-րե-հաց Գա-ւա-զան

Դաս 6 ։

Գե-ղե-ցիկ Գե-րեզ-ման
Գե-րու-թիւն Գի-նե-մոլ
Գիտ-նա-կան Գլ-խա-ւոր
Գլ-խի-բաց Գո-ղու-թիւն
Գո-վե-լի Գ-րա-գիր
Դ-րա-ցի Դ-րօ-շակ
Դժ-ուա-րին Դի-ւա-կան

Դաս 7 ։

Ե-կա-մուտ Ե-ղա-նակ
Ե-րա-ժիշտ Ե-րա-խայ
Ե-րա-մակ Ե-րա-նի
Ե-րե-ւոյթ Ե-րե-կոյ
Եր-ջա-նիկ Եօթ-նե-րորդ
Զ-բաղ-մունք Զ-բօ-սանք
Զա-նա-զան Զար-դա-րանք

Դաս 8։

| | |
|---|---|
| Զօ-րա-պետ | Զօ-րա-ւոր |
| Զօ-րու-թիւն | Ըն-դար-ձակ |
| Ընդ-հա-նուր | Ըն-տա-նի |
| Ընտ-րու-թիւն | Թա-գա-ւոր |
| Թա-գու-հի | Թաշ-կի-նակ |
| Թ-թե-նի | Թ-ուա-կան |
| Թղ-թա-բեր | Թշ-նա-մի |

Դաս 9։

| | |
|---|---|
| Ժա-մա-նակ | Ժա-մա-բար |
| Ժա-մա-ցոյց | Ժա-մա-գործ |
| Ժո-ղո-վուրդ | Ի-մաս-տուն |
| Ի-րա-ւունք | Ին-նե-րորդ |
| Լ-սե-լի | Ինք-նիշ-խան |
| Լեզ-ուա-նի | Լեռ-նա-յին |
| Լու-սա-բար | Լու-սա-փայլ |

Դաս 10 ։

| | |
|---|---|
| Խա-բե-բայ | Խա-ղա-լիկ |
| Խե-լա-ցի | Խղ-ճա-լի |
| Խղճ-մ-տանք | Խ-նո-ցի |
| Խո-հա-նոց | Խո-հա-րար |
| Խո-ղո-վակ | Խո-տե-ղէն |
| Խո-րա-մանկ | Խս-տա-սիրտ |
| Ծի-ա-ծան | Ծի-ծեռ-նիկ |

Դաս 11 ։

| | |
|---|---|
| Կա-ղա-մար | Կա-մա-ւոր |
| Կա-ռա-վար | Կաս-կա-ծոտ |
| Կաս-կա-բայ | Կա-տա-ղի |
| Կա-տար-եալ | Կա-րե-լի |
| Կա-րե-կից | Կա-րե-ւոր |
| Կեն-դա-նի | Կեր-պա-րանք |
| Կի-սա-մեռ | Կո-ղո-պուտ |

Դաս 12 ։

Կ-ռա-պաշտ Կօշ-կա-կար
Հա-կա-ռակ Հա-ճե-լի
Հա-մա-ձայն Հա-մար-ձակ
Հա-մե-մատ Հա-յաս-տան
Հա-յե-լի Համ-բե-րող
Հայ-րա-պետ Հայ-րե-նիք
Հաս-տա-տուն Հա-ռա-չանք

---

Կարդալու վարժութիւններ ։

Թէ որ ազ-գա-պետ մը ազ-գա-սէր ըլ-լայ, ազ-գին շատ բա-րիք կր-նայ հաս-ցը-նել ։ Մէ-կը անդ-րա-նիկ որ-դի մը ու-նէր, որ շատ ա-նա-մօթ և ա-նա-ռակ տ-ղայ մըն էր ։ Ա-ղաւ-նին հեզ և մա-քուր թռ-չուն մըն է ։ Ան-հա-ւատ մար-դը ա-նի-րաւ կ'ըլ-լայ ։ Քր-

րիս-տոս Աս-տու-ծոյ ա-նա-
պատ Գառ-նու-կն է ։

Ա-ռաք-եալ խր-կը-ուած ը-
սել է ։ Ա-մէն ա-րա-րած թո՛ղ
իր Ա-րար-չէն վախ-նայ ։ Աս
հի-ւան-դը բը-նաւ ա-խոր-ժակ
չու-նի ։ Ո՞ր բը-ժիշ-կը կընա-յի
ա-նոր ։ Զօ-րու-թիւն տ-ուող
կե-րա-կուր պէտք է ա-նոր ։
Յա-կոբ երկ-րէս մին-չև եր-
կին-քը դր-ուած սան-դուխ մը
տե-սաւ ։

Պօ-ղոս Ա-ռաք-եալ կ'ը-սէ,
"Արդ՝ կ'ա-ղա-չեմ ա-մէն բա-
նէն ա-ռաջ ա-ղօթք ը-նել,
խնդ-ր-ուածք, ա-ղա-չանք,
գո-հու-թիւն՝ ա-մէն մարդ-ոց
հա-մար" ։ Յով-սէփ գե-ղե-
ցիկ՝ բազ-մա-գոյն հան-դերձ

մը հա-գեր էր ։ Բա-րե-կամ մը ու-նիմ ես , որ գո-վե-լի և մար-դա-սէր բը-նու-թեան տէր մարդ մըն է ։

Բամ-բա-սանք ը-նո-ղին ա-հա-ւոր դա-տաս-տան մը պի-տի ըլ-լայ մա-հէն ետ-քը ։ Մ՛եծ քան-սար-կուն Սա-տա-նան է ․ ա-նոր պէս գոր-ծո-ղը դը-ժոխ-քը պի-տի եր-թայ ։ Բար-կու-թիւն ու նա-խանձ գար-շե-լի կիր-քեր են ։ Բր-դե-ղէն գլ-խա-նոց մը պէտք է ին-ծի ։ Մ՛ար-դոց գլ-խա-ւոր վախ-ճա-նը Աս-տու-ծոյ կամ-քը կա-տա-րե՛լն ըլ-լա-լու է ։

Աս հե-գե-լու դա-սե-րը՝ կար-դալ սոր-վե-լու հա-մար խիստ կա-րե-ւոր են ։ Ի-մաս-

տու՛ն ու խե-լա-ցի մար-դը՝ եր-
բոր դաս մը կամ գործ մը ս-կը-
սի , ան-կա-տար չը թո-ղուր :
Հա-մար-ձակ ու ան-համ-բեր
տը-ղան՝ չը-քա-լած կ'ու-զէ վա-
զել : Կա-մա-ւոր և Աս-տու-
ծոյ հա-ճե-լի զո-հը՝ կոտ-րած
սիրտն է : Վար-քդ ա-ղօթ-
քիդ հա-մա-ձայն ըլ-լայ :

Յի-սուս մեր բո-լոր նե-ղու-
թեանց և ցա-ւե-րուն մէջ կա-
րե-կից կ'ըլ-լայ մե-զի : Ա-ղէկ
կա-ռա-վար ըլ-լալ կ'ու-զես նէ՝
ինք-զին-քդ յաղ-թէ, այ-սինքն
քու չար կիր-քե-րդ : Ա-մէն
բա-նա-կան է-ակ խղճ-մը-
տանք ու-նի : Ա-նով բա-րին
ու չա-րը կ'ո-րո-շէ : Խղ-ճա-լի
է այն մար-դը որ իր խղ-ճին
մը-տիկ չ'ը-ներ :

Շարունակութիւն հեգելու դասին ։

Դաս 13 ։

Հար-սա-նիք Հա-ւա-սար
Հա-ւա-քում Հե-զու-թիւն
Հե-թա-նոս Հե-ղի-նակ
Հե-տե-ւակ Հե-տե-ւող
Հիմ-նա-դիր Հիւ-րա-սէր
Հիւ-րըն-կալ Հ-նո-տի
Հ-նա-զանդ Հո-գե-ւոր

Դաս 14 ։

Հո-վա-նի Հով-ուա-կան
Հով-ուա-պետ Հ-րա-ման
Հ-րա-ւէր Հ-րեշ-տակ
Հ-րէ-այ Հօ-րա-քոյր
Հօ-րեղ-բայր Ձայ-նա-ւոր
Ձե-ռա-գործ Ձե-ռն-հաս
Ձե-ռն-տու Ձե-ւա-ւոր

Դաս 15 ։

Ճա-նա-պարհ Ճա-ռա-գայթ
Ճար-տա-սան Ճգ-նա-ւոր
Ճե-մա-րան Ճ-րա-գու
Ճշ-մա-րիտ Մա-ռա-խուղ
Մաս-նա-կից Մար-գա-րէ
Մար-տի-րոս Մե-ծա-մեծ
Մի-ա-բան Մ-կր-տիչ

Դաս 16 ։

Յայտ-նա-պէս Յանձ-նա-ռու
Յան-ցա-ւոր Յի-շա-տակ
Նա-խա-գահ Ն-ուի-րակ
Նո-րո-գող Շա-հա-ւոր
Շա-րա-կան Շն-չա-ւոր
Շր-ջա-կայ Ո-ղոր-մած
Ո-րո-գայթ Ո-րո-տում

Դաս 17։

Ըն-կն-դիր Զար-չա-րանք
Զա-րա-չար Զա-փա-ւոր
Պա-հա-պան Պա-տաս-խան
Պա-տա-րագ Պա-տե-րազմ
Պաշ-տօն-եայ Պատ-ուա-կան
Ջ-ախ-ջա-խել Ջ-եր-մու-թիւն
Ջ-ր-հե-ղեղ Ս-պի-տակ

Դաս 18։

Ս-նո-տի Ս-տաց-ուածք
Վ-ա-յե-լուչ Վ-այ-րե-նի
Վ-ե-ցե-րորդ Տա-րա-կոյս
Տի-ե-զերք Փո-խա-րէն
Փր-կու-թիւն Փոր-ձու-թիւն
Քա-հա-նայ Օգ-նու-թիւն
Օգ-տա-կար Օ-թե-ւան

Կարդալու վարժութիւններ ։

Գիրք գ-րո-ղին հե-ղի-նակ կ՚ը-սուի ։ Հա-ւա-քու-մը ա-ղէկ գիրք մըն է ։ Յի-սու-սի հե-տե-ւող մար-դը ա-նոր հը-նա-զանդ ըլ-լա-լու է ։ Ճ՛րգ-նա-ւոր մար-դոց մէջ եր-բե-մն բա-րի-ներ գտ-ն-ուած են . բայց շատ ան-գամ ալ մե-ծա-մեծ չար-եաց պատ-ճառ ե-ղած են ։ Ճ՛շ-մա-րիտ Մար-տի-րոս ան է՝ որ Ա՛ս-տու-ծոյ հա-մար կը մե-ռ-նի ։

Մար-գա-րէն իր գա-ւա-ռին մէջ պա-տիւ չու-նի ։ Գո-ղին հետ մաս-նա-կից ե-ղո-ղը՝ ինքն ալ գո-ղու-թիւն ը-րած կը սեպ-ուի ։ Կա-տար-եալ մի-ու-թիւն սէ-րէն յա-ռաջ կու

գայ: Աստ-ուած յայտ-նա-պէս ը-սած է թէ՝ յան-ցա-ւոր մար-դիկ պի-տի պատ-ժ-ուին:

Ա-ղէկ ուն-կն-դի-րը ան է՝ որ լը-սա-ծը մի-տ-քը կը պա-հէ և 'ի գործ կը դը-նէ: Յի-սուս մե-զի հա-մար չար-չա-րանք քա-շեց, և մահ-ուան յանձ-նա-ռու ե-ղաւ: Սուրբ Հո-գի-ին նո-րո-գող կ'ը-սուի, ին-չու որ մեր սր-տե-րը կը նո-րո-գէ և կը սր-բէ:

Ա-մէն ժո-ղովք նա-խա-գահ մը պէտք է ու-նե-նայ, որ ա-մէն բան կար-գով ըլ-լայ: Սա-տա-նան ծոյ-լին հա-մար միշտ ո-րո-գայթ կը լա-րէ: Ան որ չա-րա-չար կը խնդ-րէ, պա-տաս-խան պի-տի չառ-նէ:

Դա-ւիթ կ'ը-սէ, "Ո՜վ Տէր՝ պա-հա-պա՛ն դիր իմ բեր-նիս": Ալ մեղ-քի հա-մար պա-տա-րագ պէտք չէ :

Յի-սուս է մեծ Քա-հա-նան. ա-նով մի-այն փր-կու-թիւն կը գտ-նենք : Յի-սուս սի-րե-լի և պատ-ուա-կան է ա-նոնց՝ որ ա-նոր կը հա-ւա-տան : Եր-բոր դա-սդ մեծ ջան-քով սեր-տես, տա-րա-կոյս չը կայ որ պի-տի սոր-վիս : Զա-րու-թեան փո-խա-րէն չա-րու-թիւն չ'ը-նես, այլ չա-րը բա-րի-ով յաղ-թես :

Եր-բե-մն փոր-ձու-թիւն մը օրհ-նու-թիւն կ'ըլ-լայ : Ըն-չա-ւոր մար-դը Հո-գի-ին բա-նե-րը չի մը-տա-ծեր : Ըն-գամ

մը բո-լոր աշ-խարհ ջր-հե-ղեղ ե-ղաւ . բայց Աստ-ուած ուխտ ը-րաւ որ ալ չը-նէ : Եր-բոր ո-րո-տում ու փայ-լակ ըլ-լայ , շա-տե-րը ա-հի ու դո-ղի մէջ կ'իյ-նան . մա-նա-ւանդ ա-նոնք՝ որ չեն գի-տեր ին-չէն կ'ըլ-լայ :

---

Բառավանկ բառեր :

Դաս 1 :

Ա-մե-նա-գէտ
Ա-մե-նա-կալ
Ա-նե-րե-ւոյթ
Ազ-ն-ուա-կան
Այ-սու-հե-տեւ
Ա-ռա-քի-նի
Ար-ծա-թե-ղէն

Աստ-ուա-ծա-շունչ
Բա-րո-յա-կան
Բէ-եղ-զե-բուղ

Դաս 2 :

Ե-կե-ղե-ցի
Ե-պիս-կո-պոս
Զ-գու-շու-թիւն
Զ-ուար-ճա-լի
Զին-ուո-րու-թիւն
Զր-պար-տու-թիւն
Զօ-րա-գ-լուխ
Ըն-դու-նե-լի
Ըն-տա-նե-կան
Թե-րա-հա-ւատ

Դաս 3 :

Ժո-ղո-վա-րան
Իշ-խա-նու-թիւն

Ինք-նա-գ-լուխ
Լ-ուա-ցա-րան
Լ-ու-սա-ւո-րիչ
Խ-ռո-վու-թիւն
Խա-բէ-ու-թիւն
Խա-ղա-ղու-թիւն
Կա-րո-ղու-թիւն
Կ-րօ-նա-ւոր

Դաս 4։

Հա-կա-ռա-կորդ
Հա-ղոր-դու-թիւն
Հա-րա-ւա-յին
Հա-րս-տու-թիւն
Հա-ւա-տաց-եալ
Հ-նա-րա-ւոր
Հե-տա-քր-քիր
Հե-տզ-հե-տէ

Հո-գա-բար-ձու
Հս-կո-ղու-թիւն

---

Հնգավանկ բառեր ։

Դաս 1 ։

Ա-մե-նա-կա-րող
Բազ-մա-պատ-կու-թիւն
Կան-խա-գի-տու-թիւն
Բա-րե-րա-րու-թիւն
Գե-րեզ-մա-նա-տուն
Եր-կր-պա-գու-թիւն
Ըն-դու-նե-լու-թիւն
Թա-գա-ւո-րա-կան
Լու-սա-ւո-րու-թիւն
Խոս-տո-վա-նու-թիւն

Դաս 2 ։

Հ-րա-պա-րա-կաւ
Հ-րա-տա-րա-կել

Հ-նա-զան-դու-թիւն
Խա-տա-ցու-ցա-նել
Ձե-ռա-կեր-տու-թիւն
Ա-ւե-լոր-դա-պաշտ
Կա-ռա-վա-րու-թիւն
Բա-րե-կար-գու-թիւն
Ար-ժա-նա-պա-տիւ
Բա-րե-խօ-սու-թիւն

---

Կարդալու դասեր ։

Թող վարժապետը՝ ամէն գլխաւոր բառերուն միտքը հարցունէ աշակերտին ։

Ա-ղօթք　Հա-ւատ-քով
Մեղ-քե-րը　Վեր-ջ-նեմ
Գո-հու-թիւն　Ան-դա-դար
Բա-րե-պաշտ　Լ-ուաց-ուիմ
Հաս-կ-նաս　Առ-տ-ուանց
Խո-նար-հու-թեամբ
Շ-նոր-հա-կա-լու-թիւ-նով

Ի՞նչ է աղօթքը ։

Սրտով և հաւատքով Յիսուսի երթալ և մեր կարօտութիւնը անոր յայտնելն է. նաև մեր մեղքերը անոր խոստովանիլ, և գոհութիւն տալ անոր մեզի տրուած բարիքներուն համար ։

Ի՞նչ է անդադար աղօթք ընել ։

Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ, “Անդադար աղօթք ըրէք” ։

Մա՛րիամ, ըսաւ Քարոզիչ մը մէկ բարեպաշտ կնկան մը՝ որ բոլոր օրը կը գործէր, կը հասկնա՞ս աս խօսքը ։ Այո՛, ըսաւ խոնարհութեամբ, կարծեմ՝ թէ կը հասկնամ ։

Երբոր առտուանց աչքերս կը բանամ և լոյսը կը տեսնեմ,

սիրտս Աստուծոյ կը վերցնեմ և կ'աղօթեմ որ Սուրբ Հոգին միտքս լուսաւորէ ։

Երբոր կը հագուիմ, կ'աղօթեմ որ զիս իր արդարութիւնովը հագուեցնէ ։

Երբոր կը լուացուիմ, կ'աղօթեմ որ Յիսուս իր արիւնովը իմ սիրտս լուայ ։

Երբոր կրակ կը վառեմ, կը խնդրեմ որ իմ սիրտս իր սիրովը վառէ ։

Երբոր սենեակը կ'աւլեմ, կը խնդրեմ որ իմ սրտէս ամէն գէշ բաները դուրս հանէ ։

Երբոր ուտեմ, կ'աղօթեմ որ կենաց հացովը զիս կերակրէ ։ Եւ այսպէս բոլոր օրը ինչ գործ որ ընեմ, աղօթքի կը դարձընեմ, և շնորհակալութիւնով կը

խնդրեմ Աստուծմէ որ օգնէ ինծի, որպէս զի ամէն բան իր ուղածին պէս ընեմ:

Ան օրը՝ որ այս կնիկը այս պատասխանը տուաւ քարոզիչին, ան տունը Քարոզչական ժողովք մը եղած էր. և աս նոյն Քարոզիչին յանձնած էին որ աս բնաբանին վրայ քարոզ մը խօսի իրենց: Եւ ամիս մը ժամանակ տուած էին անոր զանիկայ պատրաստելու: Բայց աս կնիկը ուսկի՞ց սորված էր, որ առանց երկայն ժամանակ խորհելու կրցաւ աս պատասխանը տալ Քարոզիչին: Անշուշտ սուրբ Հոգիէն և սուրբ Գիրքէն որ "Տգէտը իմաստուն կ'ընէ": Սաղմ. ԺԹ. 7:



Տէրունական աղօթք ։

Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ ․ Քու թագաւորութիւնդ գայ, քու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ ․ Մեր ամէն աւուր հացը՝ այսօր մեզի տո՛ւր ․ Եւ մեզի ներէ՛ մեր

պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականնե-րուն. Ու մեզ փորձութեան մի՛ տանիր. հապա չարէն մեզ ազա-տէ՛. ինչու որ քուկդ է թագա-ւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս. ամէն:

---

Սուրբ Գիրքէն համառօտ աղօթքներ ։

Աստուած՝ ողորմէ՛ ինծի մե-ղաւորիս: Ղու. ԺԸ. 13:

Իմ անօրէնութենէս բոլորո-վին իս լուա, ու իմ մեղքէս իս սրբէ: Սաղմ. ԾԱ. 2:

Ո՛վ Աստուած՝ իմ մէջս մա-քուր սիրտ ստեղծէ: Սաղմ. ԾԱ. 10:

Իս երեսէդ մի՛ ձգեր, ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի՛ հաներ: Սաղմ. ԾԱ. 11:

Մեղաւորիս, Տէր, սորվեցո՛ւր
Քեզի աղօթք ընել.
Քու Սուրբ Հոգիդ ինծի խրկէ՛
Չար սիրտըս նորոգել:

Ինկած էակ մը ծնունդէս
Քեզի դէմ մեղք ըրի.
Եւ թէ որ դուն ինծի չօգնես,
Հոգիս կը կորսուի:

---

Պարզ աղօթք մը:

Քու բոլոր պատուիրանքներդ ճշմարիտ են. զուր տեղը զիս կը հալածեն, օգնէ՛ ինծի: Սաղմ. ՃԺԹ. 86:

Յիսուս՝ օգնէ՛ ինծի,
Խիստ շատ տկար եմ ես
Հիմա կուգամ քեզի,
Քանզի "Եկուր" կ՚ըսես:

Յիսուս՝ օգնէ՛ ինծի ,
Զի շատ տգէտ եմ ես .
Աղօթք կ՚ընեմ քեզի
Որ ինծ սորվեցընես ։

Յիսուս՝ օգնէ՛ ինծի ,
Մեծ մեղաւոր եմ ես .
Չար սիրտս կուտամ քեզի
Որ դուն հիմա սրբես ։

Յիսուս՝ օգնէ՛ ինծի ,
Ի՛նչ պէտք է դուն գիտես .
Անանկ նայիմ քեզի
Որ միշտ դուն ինծ օգնես ։

---

Պզտիկ տղոց իրիկուան աղօթքը ։

Հիմա ես որ պառկիմ պիտի ,
Յի՛սուս , աղօթք կ՚ընեմ քեզի .
Բոլոր մեղքերըս , Տէ՛ր , ներէ՛
Ու աս գիշերըս զիս պահէ՛ ։

Թէ որ նորէն ես չարթննամ,
Շնորհէ՛, ո՛վ Տէր, որ քովդ
գամ. Ամէն:

Առտուան աղօթք մը:

Քեզմէ շնորհակալ եմ, Տէ՛ր,
Որ իմ աղօթքըս ես լսեր՝
Գիշերը զիս պահպանեցիր
Եւ անուշ քուն վայլել տուիր:
Ո՛վ Հայր իմ, այսօր ալ պահէ՛
Ամէն տեսակ չարութենէ.
Տկար աղօթքըս ընդունէ՛
Եւ զիս քուկին զաւակդ ըրէ՛.
Ամէն:

Թող աս երկու աղօթքները ամէն մայր իր փոքր զաւկին սորվեցնէ՝ անոր լեզու ելած ատենէն սկսելով:



Հնազանդութիւն :

“ Թէ որ զիս կը սիրէք , իմ պատուիրանքներս պահեցէք” : Յովհ . ԺԴ . 15 :

Պզտիկ աղջիկ մը՝ որուն անունը Թագուհի էր, իր մէկ բարեկամին տունը տեսութեան գացած էր: Երբոր սեղան նստած էին կերակուր ուտելու, տանը Տիկինը քիչ մը անուշ տուաւ անոր որ ուտէ:

Շնորհակալ եմ, ըսաւ աղջիկը, չեմ ուտեր: Ինչո՞ւ, ըսաւ Տիկինը, չե՞ս սիրեր: Այո, կը սիրեմ. բայց մայրս հրաման չունի որ ուտեմ: Տիկինը ըսաւ, Մայրդ հոս չէ, կե՛ր: Չէ՛, ըսաւ Թագուհին, գիտեմ որ եթէ մայրս հոս ըլլար, չը պիտի տար ինծի. ու թէեւ մայրս հոս չէ, բայց պէտք է հնազանդիմ անոր:

Այս աղջկան ըրածը ճշմարիտ հնազանդութիւն էր. և այսպէս ընելով՝ իր մայրը պատուեց:

Այսպէս մենք ալ պարտաւոր ենք ամէն բանի մէջ մեր երկնաւոր Հօրը կամքը ընել։ Սուրբ Գիրքը կ'ըսէ, թէ՛ ուտենք և թէ՛ խմենք և թէ ի՛նչ որ ընենք, ամէն բան Տէրոջը փառքին համար ընելու ենք։ Երբոր կ'ուտենք, մեր միտքն ըլլայ՝ որ զօրանանք Աստուծոյ կամքը ընելու. չէ թէ անասուններուն պէս զուարճանանք, այլ ամէն բանի մէջ Աստուծոյ հաճելի եղածը փնտռենք, և մեր գործը ի՛նչ որ ըլլայ՝ Աստուծոյ ուզածին պէս կատարենք։

---

Վրէժխնդրութիւն։

“Սի՛րելիք՝ վրէժխնդրութիւն մի՛ ընէք ձեր անձերուն համար, հապա բարկութեան տե՛ղ տը-

ւէք. ինչու որ գրուած է. Վրէժխնդրութիւնը իմս է. ես պիտի հատուցանեմ՝ կ'ըսէ Տէրը: Ուստի թէ որ քու թշնամիդ անօթեցեր է՝ հա՛ց տուր անոր; և թէ որ ծարաւ է՝ ջու՛ր տուր անոր. քանզի աս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դիզես: Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիով յաղթէ՛ չարին": Հռով. ԺԲ. 19-21:

Յովհաննէս և իր քոյրը Մարթա մէկ դպրոց կ'երթային: Իրենց խաղցած ժամանակը Վարժուհին տեսաւ որ Յովհաննէս բարկութեամբ մը Մարթային երեսին զարկաւ: Մարթան ձեռքը վերցնելով կ'ուզէր ինքն ալ զարնել եղբօրը. աս բանը տեսնելով վարժուհին՝ շուտ մը

*բաւ, մի՛ զարներ, Մա՛րթա, երեսը պագ։ Եւ Մարթան ձեռքը ետ քաշելով՝ անոր վիզը պլլուեցաւ։ Յովհաննէս շատ զարմացաւ, և անմիջապէս սկսեց լալ. ինչու որ իր քրոջն ըրածը իր սիրտը կոտրեց, ու շուտ մը անկէ ներում խնդրեց։*

*Ուստի երբոր մէկը մեզ վնասէ, զանիկայ բարիով յաղթելու ենք. ինչու որ գրուած է թէ՝ "Չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի՛ հատուցանէք"։ Հռով. ԺԲ. 17։ "Չարութեան փոխարէն հատուցանեմ՝ մի՛ ըսեր. Տէրո՛ջը սպասէ, ու անիկայ քեզ պիտի ազատէ"։ Առակ. Ի. 22։*

### Հայհոյութիւն և անէծք ։

"Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ չառնես . ինչու որ Տէրը՝ իր անունը պարապ տեղը բերան առնողը՝ անմեղ պիտի չսեպէ" ։ Ելից . Ի . 7 ։

Հայհոյութիւն ընելը ահռելի բան մըն է ։ Ո՞վ քեզ ստեղծեց ։ Ո՞վ ողջ կը պահէ քեզ ։ Ո՞վ լեզու տուաւ քեզի ։ Ո՞վ խօսելու կարողութիւն տուաւ քեզի ։ Ո՞վ կը հագուեցնէ և կը կերակրէ քեզ ։ Ո՞վ քու մարմինիդ մէջ հոգի մը դրաւ ։ Ո՞վ իր որդին խրկեց քու փրկիչդ ըլլալու համար ։ Որո՞ւն աշխարհքին վրայ կը բնակիս ։ Որո՞ւն արեգակը քու վրադ կը ծագի ։ Որո՞ւն օդը կը շնչես ։ Դուն գիտես՝ որ

ամէն ատոնք տուողը և ընողը Աստուած է : Որչա՜փ մեծ և բարերար Աստուած մըն է : Սէր է ան : Պարտաւոր չե՞ս սիրել զանիկայ , շնորհակալ ըլլալ անկէ և անոր կամքը կատարել :

Հայհոյութիւն ընողները պէտք է յիշեն՝ որ Աստուած իրենց ամէն ըսածը կը լսէ . և թէ որ չապաշխարեն ու չը ձգեն, անշուշտ դժոխք պիտի խրկէ զիրենք :

"Ո՛վ որ իր հայրը ու մայրը կ'անիծէ , անոր ճրագը մութ խաւարի մէջ պիտի մարի" : Առակ . Ի . 20 :

"Ձեզ հալածողները օրհնեցէ՛ք. օրհնեցէ՛ք՝ ու մի՛ անիծէ՛ք" : Հռով . ԺԲ . 14 : Եւ Յոբ կ'ըսէ , "Լեզուիս ալ մեղք գործելու

*թող չտուի, անէծքով անոր մեռնիլը ուզելով": Յոբ. ԼԱ. 30:*

*Մայրերը պէտք է գիտնան՝ թէ իրենց տղաքները անիծելը մեղք է. ասոր տեղը միշտ բարի օրինակ ցուցնելու են իրենց տղոցը թէ՛ խօսքով ու թէ գործքով:*

---

Կանանց խրատներ:

*"Նոյնպէս ալ պառաւներուն անանկ վարմունք ունենալ, ին-տոր կը վայլէ սրբութեան, ո՛չ բանսարկու ըլլալ, ո՛չ գինեմոլ, հապա բարի խրատ տուող. որ խրատեն նորահասակ կնիկները՝ էրիկնին սիրող, զաւակնին սի-րող ըլլալ, խոհեմ, ողջախոհ, տնաշէն, բարեգործ, իրենց է-րիկներուն հնազանդ. որ չըլլայ*

թէ Աստուծոյ խօսքը հայհոյուի" : Տիտ. Բ. 3-5 :

"Իմաստուն կնիկները իրենց տունը կը շինեն. բայց յիմար կնիկը զանիկայ իր ձեռքովը կը փլցնէ" : Առակ. ԺԴ. 1 :

"Աղէկ է տանիքի մը անկիւնը բնակիլ, քան թէ կռուասէր կնկան հետ մեծ տան մէջ" : Առակ. ԻԵ. 24 :

"Տէրոջմէ վախցող կնիկը պիտի գովուի" : Առակ. ԼԱ. 30 :

Մայր մը՝ եթէ կ'ուզէ որ իր տղաքը բարի ըլլան, ինքը անոնց բարի վարք մը ցուցնելու է : Բարի մայր մը՝ "Իր բերանը իմաստութեամբ կը բանայ, և իր լեզուին վրայ քաղցրութեան օրէնք կայ" : Առակ. ԼԱ. 26 :

*Պզտիկ աղջկան մը բարի որոշումները :*

*Աս աղջիկը իր վեց տարեկան հասակին մէջ մեռաւ : Իր մեռնելէն ետքը՝ մայրը անոր սնտուկին մէջ իր ձեռքովը գրուած թուղթ մը գտաւ , որուն վրայ աս որոշումները կային—*

*1 . Երբոր առտուն արթննամ, շնորհակալ ըլլամ Աստուծմէ :*

*2 . Միշտ հօրս ու մօրս հնազանդ ըլլալու պիտի ջանամ :*

*3 . Իմ դասերս աղէկ սորվելու պիտի ջանամ :*

*4 . Միշտ ջանամ որ չը բարկանամ , այլ սիրով ըլլամ :*

*5 . Վերջապէս՝ պիտի ջանամ որ իբրեւ Աստուծոյ զաւակը բարի վարք մը ցուցնեմ :*

*Ամէն տղայ ու աղջիկ թո՛ղ օրինակ առնեն ասկէ , եւ յիշեն՝*

թէ եթէ կ'ուզեն բարի ըլլալ՝
միշտ աղօթք ու ջանք պէտք է ։
Ամէն մարդ ալ՝ թէ՛ մեծ և
թէ պզտիկ, գիտնալու են՝ թէ
Աղօթք առանց ջանքի պարապ
է, և ջանքը առանց աղօթքի ։

"Տէրոջը աչքերը ամէն տեղ
չարերը ու բարիները կը դի-
տեն" ։ Առակ. ԺԵ. 3 ։

Անգամ մը մարդ մը խանութ
մը գնացքին մը շաքար առնելու ։
Աշակերտին ըսաւ, Թո՛վմաս,
տէրդ հոս չէ, քիչ մը աւելի
լեցո՛ւր ։ Բայց Թովմաս ծան-
րութեամբ մը անոր երեսը նայե-
լով պատասխանեց թէ՝ "Իմ Տէրս
միշտ ներկայ է" ։

Թովմասին Տէրը ամենա-
տես Աստուածն էր ։ Ամէն

մարդ և ամէ՛ն պզտիկ՝ երբոր Սատանայէ՛ն կը փորձուի, թո՛ղ աս խօսքը յիշէ՝ թէ Իմ Տէրս Աէրս նեցուկս է:

Թէպէտ պզտիկ տղայ մ՛ըն եմ,
Մէկ բան մը ես աղէկ գիտեմ.
Թէ իմ անունս Աստուած գիտէ,
Եւ ի՛նք ըրածըս կը դիտէ:

Թէ խաղամ ես և թէ գործեմ,
Տէրը գիտէ երբ մեղանչեմ.
Ի՛նք իմ խօսքերս միշտ կը լսէ,
Եւ խորհուրդներս ալ կը փորձէ:

Զգուշութի՛ւն ընել կուտար,
Թէ որ մեծ մարդ մը քովս ըլլար.
Չըլլայ որ ես զԱստուած մոռնամ,
Այլ միշտ իր սուրբ աչքէն վախնամ:

Երբ զիս փորձէ չարն Սատանայ,
Շուտ մը ըսեմ՝ Յետիս գնա՛.
Աղօթք ու ջանք ալ չը ձգեմ,
Եւ իմ Աստուածըս միշտ յիշեմ:

---

Տղայոց ժուժկալութեան ընկերութիւնը:

Մի՛ մօտենար, համը մի՛ առ-
ներ, մի՛ դպչիր

| | | |
|---|---|---|
| Օղի | Գինի | Ծխախոտ |
| Ցքի | Ափիոն | Բլթախոտ |

Մենք ստորագրեալ տղաքներս կ'ուխտենք՝ որ Այսուհետև Աստուծոյ օգնութեամբը վերոյիշեալ ոգելից ըմպելիքներէն և մեր կենացը վնասակար ու թունալից բաներէն բոլորովին հեռացընենք ինքզինքնիս: Եւ պիտի ջանանք որ ուրիշներն ալ

*համոզենք՝ թէ՛ մեծ և թէ պզտիկ, որ իրենք ալ նոյն ուխտը ընեն :*

*Ամէնքդ գիտէք՝ որ ծուռ ծառ մը քանի որ պզտիկ է կրնայ դիւրութեամբ շիտկուիլ, բայց երբոր մեծնայ դժուար է շիտկըւիլը : Այսպէս ալ տղոց բնութիւնը և սովորութիւնները :*

*Կանուխ սկսելու է մնասակար սովորութիւններէն ետ կենալ, և բարի բաներու ձեռք զարնել :*

*Որ յուսանք՝ թէ ամէն դպրոցի տղաքներ վերոյիշեալ ընկերութեան անդամ պիտի ըլլան :*

*Ըս ընկերութեան վերաբերեալ վկայութիւններ Սուրբ Գիրքէն :*

Գինիի և անոր նման ըմպելեաց համար :

"Գինին ծաղր ընող է, ու ցքին կռիւ հանող, և ո՛վ որ ասոնց անձնատուր կ՚ըլլայ, իմաստուն չըլլար" : Առակ. Ի. 1 :

"Որո՞ւն է վա՜յը. որո՞ւն է ո՜հը. որո՞ւն են կռիւները. որո՞ւն են տրտունջները. որո՞ւն են առանց պատճառի վէրքերը. որո՞ւն է աչաց կարմրութիւնը : Գինիին քովը մնացողներուն, խառնած գինին փնտռելու գացողներուն : Մի՛ նայիր գինիին կարմրութեանը՝ գաւաթին մէջ իր գոյնը ցուցնելուն՝ ու շիտակ վազելուն. Անիկայ եաքը օձի պէս կը խածնէ,

ու քարբի պէս կը խայթէ" : Առակ . ԻԳ . 29-32 :

"Ո՛չ Լեմուէլ՝ թագաւորներուն չվայլեր, գինի խմելը թագաւորներուն չվայլեր, և օղի խմելը իշխաններուն չվայլեր . Չըլլայ որ խմեն՝ ու օրէնքը մոռնան, և տառապեալներէն մէկուն դատաստանը ծռեն" : Առակ . ԼԱ . 4, 5 :

"Վա՜յ անոնց՝ որ առաւօտուն կանուխ կ'ելլեն, ու ցքի խմելու ետևէ կ'ըլլան, և իրիկունն ալ կ'ուշանան, մինչև որ գինին իրենց գլուխը տաքցընէ : Վա՜յ անոնց՝ որ գինի խմելու զօրաւոր՝ ու ցքի խառնելու կտրիճ են" : Ես . Ե . 11, 22 :

Ծխախոտի վերաբերեալ բաներու համար քանի մը խօսքեր Սուրբ Գիրքէն :

"Անոնց ազատութիւն կը խոստանան, և իրենք ապականութեան ծառաներ են. վասն զի ինչ բանէ որ մէկը յաղթուի, անոր ծառայ ալ կ'ըլլայ" : Բ Պետ. Բ. 19 :

"Աղէկ է միս չուտել, և գինի չխմել, ո՛չ ալ բան մը ընել, որով քու եղբայրդ կը գլորի՝ կամ կը գայթակղի՝ կամ կը տկարանայ" : Հռով. ԺԴ. 21 :

"Բայց իմ մարմինս կը ճնշեմ՝ ու կը նուաճեմ, որ չըլլայ թէ ուրիշներուն քարոզելէս ետև՝ ես ինքս խոտելի գտնուիմ" : Ա Կորնթ. Թ. 27 :

"Արդ՝ թէ՛ ուտէք՝ թէ խմէք՝ և թէ ի՛նչ գործ որ ընէք, ամէն

բան Աստուծոյ փառքին համար ըրէք: Գայթակղութեան պատճառ մի՛ ըլլաք, ո՛չ Հրէաներուն, ոչ հեթանոսներուն և ոչ Աստուծոյ եկեղեցիին: Ա Կորնթ. Ժ. 31, 32:

Շատերը գուցէ պիտի հարցնեն՝ թէ վերոյիշեալ խօսքերը յիշեալ նիւթերուն ի՞նչ վերաբերութիւն ունին:

Կը պատասխանենք՝ թէ Այն բանը որ օգտակարութիւն չունի և ինքնին վնասակար է, և որով ստակ ու ժամանակ ալ կը վատնուի, բնաւ վայելուչ չէ Քրիստոնէին:

Բժիշկները կը վկայեն՝ թէ ծխախոտը թունաւոր բան մըն է: Առաջ զուարճութեան համար կ'սկսին խմել, բայց վերջը

անանկ գերի կ՚ըլլան անոր՝ որ կ՚ըսեն՝ թէ "Ի՞նչհնար բան է զանիկայ ձգելը" :

Ասոնց գործածութիւնը գայթակղութիւն ալ կըպատճառէ : Հայրերը իրենց տղոցը սաստիկ կըպատուիրեն որ չը խմեն . բայց իրենք քանի որ կըխմեն , տղաքները կը համոզուին թէ մարդավայել բան մըն է ; և ուստի կ՚սկսին գաղտուկ խմել , կա՛մ ծխախոտ և կամ զանիկայ գնելու համար սատակ գողնալով . և ասանկով գայթակղութիւն կը պատճառի :

Ուստի տղաքները աս բաներէն զգուշացնելու համար և զանոնք ուղիղ սկզբունքներով վարժեցնելու համար՝ աս ընկերութիւնը կը հաստատենք :

"Աղէկ է որ ուխտ չընես, քան թէ ուխտ ընես, ու չկատարես" : Ժող. Ե. 5 :

---

Ի՞նչ է ճշմարիտ Քրիստոնեայ մը ըլլալ և երկինքին համար պատրաստուիլ :

1. Քրիստոսի հոգիին նման հոգի մը ունենալ :

"Բայց դուք մարմինով չէք, հապա հոգիով. թէ որ Աստուծոյ Հոգին ձեր մէջը բնակած է. իսկ թէ որ մէկը Քրիստոսի Հոգին չունի, անիկայ անորը չէ" : Հռով. Ը. 9 :

2. Ամէն ատեն Անոր կամքը փնտռել ու ընել :

"Ան որ իմ պատուէրներս կը բռնէ՝ ու կը պահէ անոնք, անիկայ է զիս սիրողը" : Յովհ. ԺԴ. 21 :

"Թէ որ իմ պատուէրներս պահէք, իմ սիրոյս մէջը պիտի կենաք: Դուք իմ բարեկամներս էք, թէ որ ընելու ըլլաք ի՛նչ որ ես ձեզի կը պատուիրեմ": Յովհ. ԺԵ. 10, 14:

3. Հին և ապականեալ սրտին տեղը՝ նոր և մաքուր սիրտ մը ունենալ:

"Ճշմարի՛տ ճշմարի՛տ կ'ըսեմ քեզի, թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել": Յովհ. Գ. 3:

"Ուրեմն թէ որ մէկը Քրիստոսի մէջ է, անիկայ նոր ստեղծուած մըն է. հիները անցան, և ահա՛ ամէն բան նոր եղաւ": Բ Կորնթ. Ե. 17:

4. *Ամէն տեսակ մեղք ատել ու զանոնք ձգել :*

"*Եւ ամէն ո՛վ որ աս յոյսը անոր վրայ ունի, ինքզինքը կը մաքրէ, ինչպէս որ անիկայ մաքուր է: Ամէն ո՛վ որ անոր մէջը կը կենայ, մեղք չգործեր. (այսինքն կամենալով, կամ ուզելով): Եւ ան որ մեղք կը գործէ՝ Սատանայէն է*": Ա Յովհ. Գ. 3, 6, 8:

5. *Որչափ որ կարելի է՝ ամենուն բարիք ընել :*

"*Ուստի ո՛վ որ բարին ընելը գիտնայ՝ ու չընէ, ան մեղք է անոր*": Յակ. Դ. 17 :

6. *Աստուծոյ խօսքը ճշմարտապէս սիրել, և զանիկայ կարդալ ու սրտերնուս մէջ պահել անոր բանները :*

"Ան որ Աստուծմէ է, Աստուծոյ խօսքերը մտիկ կ՚ընէ . դուք անոր համար մտիկ չէք ըներ, որ Աստուծմէ չէք" : Յովհ . Ը . 47 :

7 . Ամէն մարդ անկեղծութեամբ սիրել, մինչև անգամ մեր թշնամիները . և ամենուն ներողամիտ ըլլալ :

"Մենք գիտենք որ մահէն կեանքի փոխուեցանք . ինչու որ եղբայրները կը սիրենք . ան որ եղբայրը չսիրեր, մահուան մէջ կը մնայ" : Ա Յովհ . Գ . 14 :

"Բայց ես ձեզի կ՚ըսեմ . Սիրեցէ՛ք ձեր թշնամիները . օրհնեցէ՛ք ձեզ անիծողները . բարի՛ ըրէք անոնց՝ որ ձեզ կ՚ատեն, և աղօթք ըրէք անոնց համար՝ որ

ձեզ կըչարչըրկեն ու կը հալածեն. Որ ձեր երկնաւոր Հօրը որդիքը ըլլաք. ինչու որ իր արեւը կը ծագեցընէ թէ՛ չարերուն և թէ բարիներուն վրայ, և անձրև կըխրկէ թէ՛ արդարներուն և թէ մեղաւորներուն վրայ": Մատթ. Ե. 44, 45: "Հապա թէ որ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի չիներեր ձեր յանցանքները": Մատթ. Զ. 15:

8. Աղօթքը սիրել, ու անդադար ընել:

"Հապա ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, գոհութիւնով մէկտեղ ձեր խընդրուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ": Փիլ. Դ. 6:

9. Փրկութեան համար միայն

*Քրիստոսի ապաւինել և ո՛չ ուրիշ մէկու մը կամ բանի մը ։*

*"Ինչու որ Աստուած անանկ սիրեց աշխարհը մինչև որ իր միածին Որդին տուաւ . որ ամէն ո՛վ որ անոր հաւատայ՝ չկորսուի , հապա յաւիտենական կեանք ունենայ" ։ Յովհ . Գ . 16 ։*

*"Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ տրուած , որ անով կարող ըլլանք փրկուելու" ։ Գործ . Դ . 12 ։*

10 . *Շնորհքով աճիլ ։*

*"Աս մասին վստահ ըլլալով՝ թէ ան որ ձեր մէջը բարի գործ մը սկսեց , մինչև Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ" ։ Փիլ . Ա . 6 ։*

“Մինչեւ որ ամէնքս ալ հասնինք հաւատքին ու Աստուծոյ Որդին ճանչնալուն միաբանութեանը, կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի լման հասակին չափը ունենալու” : Եփես. Դ. 13 :

Բարի որոշումներ :

1. Հիմա Տէրոջը օգնութեամբը կ'որոշեմ որ՝ ճշմարիտ Քրիստոնեայ մը պիտի ըլլամ :

2. Իմ չար ընթացքս ձգելով՝ այսուհետեւ Աստուծոյ պիտի հնազանդիմ :

3. Ամէն օր աղօթքով սկսիմ որ Տէրը օգնէ ինծի, եւ իր Սուրբ Հոգին պարգեւէ՝ որ կարող ըլլամ նեղ ճամբուն մէջ քալել :

4. Սուրբ Գիրքը իմ կենացս



Առաջնորդը պիտի ընեմ, և ամէն օր աղօթքով կարդամ զանիկայ ։

5. Տէրոջը օգնութեամբը ամէն օր պիտի ջանամ՝ որ իմ բնութիւնս և չար կիրքերս յաղթեմ ։

6. Պիտի ջանամ որ իմ գործերս՝ ի՛նչ որ ըլլայ, Տէրոջը հաճելի եղածին պէս ընեմ:

7. Ամէն իրիկուն՝ նոյն օրուան ըրածներս միտքս բերելով անձնաքննութիւն ընեմ. և պակսութիւններուս համար Աստուծմէ ներում խնդրեմ, և օգնութիւն ալ որ նորէն ուխտազանց չը գտնուիմ:

8. Կ'որոշեմ՝ որ բնաւ մէկ բան մը չընեմ, որուն համար խղճմտանքս կը վկայէ՝ թէ Աղէկ չէ՛: Աս ալ կանոն մը ըլլայ ինծի՝ որ երբ գործի մը վրայ տարակուսիմ, չընեմ ան գործը:

9. Կ'որոշեմ՝ որ երբե՛ք ան գործը չընեմ, որուն համար չեմ կրնար Աստուծոյ օգնութիւնը խնդրել:

10. Կ'որոշեմ՝ որ թէ՛ տունը և թէ դուրսերը բարի օրինակ ցուցնեմ: Խոնարհութեամբ, հեզութեամբ և քաղցրութեամբ վարուիմ ամենուն հետ՝ ամէնը պատուելով:

Վերջապէս՝ կ'որոշեմ որ
Ինչ որ ճշմարտութիւնով է,
Ինչ որ պարկեշտութիւնով է,
Ինչ որ արդարութիւնով է,
Ինչ որ մաքրութիւնով է
Ինչ որ սիրով է,
ան բաներուն ետեւէն միշտ ըլլամ, որ սանկով զԱստուած փառաւորեմ:

Սիրելի ընթերցող, կը յուսամք՝ թէ աս գրքոյկը լմնցընելով անանկ կէտի մը հասած ես, որ կարող պիտի ըլլաս Սուրբ Գիրքը կարդալու. որ անիկայ

է միայն կենաց Աղբիւրը ։ Պօղոս առաքեալ Տիմոթէոսին գրեց՝ թէ "Դու մանկութենէդ 'ի վեր սուրբ գիրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը ։ Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցընելու, յանդիմանելու, շիտկելու, ու արդարութեան խրատելու համար ․ Որ Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործքերու պատրաստուած" ։ Բ Տիմ. Գ. 15-17 ։ Եւ Քրիստոս ալ ըսաւ, "Գիրքերը քննեցէ՛ք ․ ինչու որ դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանքը ունենալ ․ և բուն անոնք են որ ինծի համար կը վկայեն" ։ Յօհ ․ Ե ․ 39 ։

Մ՛ենք չենք ձգեր սուրբ Գիրքը,
Աստուածային մատեանն.
Վասնզի մանկանց է առաջնորդ,
Ծերոց ալ գաւազան:
Կանթեղ է ան. լոյս փառաւոր
Կուտայ մեր մութ ճամբուն.
Կը ցուցնէ փառք երկնաւոր
Բնակարան սիրուն:

Մ՛ենք չենք ձգեր Սուրբ
Գիրքը,
Աստուածային մատեանն.
Վասնզի մանկանց է առաջ-
նորդ,
Ծերոց ալ գաւազան:

Մ՛ենք չենք ձգեր սուրբ Գիրքը,
Վասնզի միայն անկէ
Երկնից ճամբան կրնանք գտ-
նել,
Փախչիլ ալ դժոխքէ:

Անոր մէջ կը կարդանք թէ ո՛վ
Իջաւ հոս երկինքէն՝
Որ իր արիւնը թափելով
Մեզ ազատէ մեղքէն ։

Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը
Աստուածաշունչ մատեանն ․
Քանզի մանկանց է առաջ-
նորդ ,
Ծերոց ալ գաւազան ։




Սիրելի ընթերցող, աս Բանալիին միջոցովը ահա Սուրբ Գիրքը առջեւդ բացուած կը տեսնես ։ Առ ու կարդա ։

Սա ցանկերուն համառօտութիւնները սորվելով կարող կ'ըլլաս զանիկայ աւելի դիւրութեամբ քննելու ։

---

## ԳԻՐՔ

Ծն · Ծննդոց
Ել · Ելից
Ղև · Ղևտացւոց
Թւոց · Թւոց
Բ · օր · Երկրորդ Օրինաց
Յես · Յեսուայ
Դատ · Դատաւորաց
Հռութ · Հռութայ
ա · բ · գ · դ · Թագ · Թագաւորաց
ա · բ · մն · Մնացորդաց
Եզր · Եզրասայ
Նեեմ · Նէեմեայ
Եսթեր · Եսթերայ
Յոբ · Յոբայ
Սաղ · Սաղմոսաց
Առակ · Առակաց
Ժող · Ժողովողի
Երգ · Երգ Երգոց

## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

Ես · Եսայեայ
Երեմ · Երեմիայ
Ողբ · Ողբք Երեմիայ
Եզեկ · Եզեկիէլի
Դան · Դանիէլի
Ովս · Ովսեայ
Յովել · Յովելեայ
Ամով · Ամովսայ
Աբդ · Աբդիու
Յովն · Յովնանու
Միք · Միքիայ
Նաւ · Նաւումայ
Ամբ · Ամբակումայ
Սոփ · Սոփոնիայ
Անգ · Անգեայ
Զաք · Զաքարիայ
Մաղ · Մաղաքիայ

## ԱՒԵՏԱՐԱՆ

*Մատ. Մատթէոսի*
*Մար. Մարկոսի*
*Ղու. Ղուկասու*
*Յօհ. Յովհաննու*
*Գոր. Գործք Առաքելոց*

## ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

*Հռով. Հռովմայեցիս*
*ա. բ. Կոր. Կորնթացիս*
*Գաղ. Գաղատացիս*
*Եփե. Եփեսացիս*
*Փիլ. Փիլիպպեցիս*
*Կող. Կողոսացիս*
*ա. բ. Թես. Թեսաղոնիկեցիս*
*ա. բ. Տիմ. Տիմոթէոս*
*Տիտ. Տիտոս*
*Փիլեմ. Փիլեմոն*
*Եբր. Եբրայեցիս*

## ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

*Յակ. Յակոբու*
*ա. բ. Պետ. Պետրոսի*
*ա. բ. գ. Յօհ. Յովհաննու*
*Յուդ. Յուդայի*
*Յայտ. Յայտնութիւն Յովհաննու*

ՎԵՐՋ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ-Арм.ССР
им. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013

3352